ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանին Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Վիգեն Քոչարյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2019թ. փետրվարի 18-ից 20-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպական միություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն ԵՄ արևելյան գործընկերության առաջին պլատֆորմի «Պետական կառույցների հզորացում և լավ կառավարում» 19-րդ հանդիպմանը:

Քննարկված թեմաները՝ ԱլԳ երկրներում ընտանեկան բռնության և սեռական ոտնձգության դեմ պայքարին, իրավունքի գերակայության ամրապնդմանը, արդարադատության մատչելիության ապահովմանը, դատական որոշումների պարտադիր կատարման ամրապնդմանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը 2019թ. փետրվարի 19-ին Բելգիայի Թագավորությունում (Բրյուսել) մասնակցել է ԵՄ արևելյան գործընկերության առաջին պլատֆորմի «Պետական կառույցների հզորացում և լավ կառավարում» 19-րդ հանդիպմանը:

Բրյուսելում տեղի ունեցած հանդիպման հիմնական քննարկման առարկա են հանդիսացել ԱլԳ երկրներում իրավունքի գերակայության ամրապնդմանը, արդարադատության մատչելիության ապահովմանը, դատական որոշումների պարտադիր կատարման ամրապնդմանը, ընտանեկան բռնության և սեռական ոտնձգության դեմ պայքարին առնչվող հարցեր: Հանդիպման ընթացքում

մասնակից պետությունների ներկայացուցիչները հատուկ ուշադրություն են դարձրել ընտանեկան բռնության կանխարգելման ծրագրերի մշակմանը և դրանց արդյունավետ իրականացմանը: «Պետական կառույցների հզորացում և լավ կառավարում» 19-րդ հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև «20 արդյունք մինչև 2020թ.» փաստաթղթով ամրագրված միջոցառումների իրագործմանը: Հարկ է ընդգծել նաև, որ վերը նշված հանդիպման ընթացքում քննարկվել է նաև ԱլԳ երկրների մասնակցությամբ 2019թ. կայանալիք հարթակների և հանդիպումների աշխատանքային ծրագիրը:

Եվրոպական կողմի առաջարկությամբ հանդիպման ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը հանդես է եկել ելույթով: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը մասնակիցներին ներկայացրել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի հիմնական կարգավորումները, ինչպես նաև անդրադարձել է օրենքի արդյունավետ իրագործման հիմնահարցերին: Վիգեն Քոչարյանն իր ելույթում անդրադարձել է նաև ՀՀ կողմից 2018թ. հունվարին ստորագրված «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա) վավերացման գործընթացին: Եվրոպական կողմն իր գոհունակությունն է հայտնել ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում ՀՀ կառավարության կողմից գործադրած ջանքերի կապակցությամբ՝ այդ համատեքստում կարևորելով օրենքի արդյունավետ կիրառումը: Միաժամանակ, եվրոպական կողմը տպավորված է եղել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունման խոչընդոտների և մարտահրավերների լուծմանն ուղղված

հայաստանյան փորձով՝ հանդիպման ընթացքում մի քանի անգամ հղում անելով վերջինիս:

Հարկ է նշել նաև, որ հանդիպման շրջանակում Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը քննարկել է մարդու իրավունքների ոլորտում ՀՀ հանձնառությունների կատարմանն ուղղված հնարավոր աջակցության հիմնահարցերը:

Հարգանքով՝

Վիգեն Քոչարյան

21.02.2019թ.